<<ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ>>

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆԱԽԱԱՏԵՍՏԱՑԻՈՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Մանակից՝ Ֆլորա Բաբկենի Խաչատրյան

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Խումբ՝ Սյունիք 36

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Բանահյուսական հենք ունեցող ստեղծագործությունների ուսուցման շարունակականությունը միջին և ավագ դպրոցում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՊԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԵՎ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ:

2.ՄԻՋԻՆ ԵՎ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ <<ՄԱՅՐԵՆԻ>>, <<ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ>>, <<ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ>> ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԵՎ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԵՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿԱՊԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

3.ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԵՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ

Ներածություն

Բանահյուսությունը ժողովրդի բանավոր ստեղծագործությունն է: Այն ընդգրկում է ժողովրդի կուտակած իմաստությունը և դարավոր կենսափորձը: Դեռևս վաղ մանկությունից երեխան

ծանոթանում է բանահյուսական տարբեր ստեղծագործությունների (հեքիաթ, առակ, առած-ասացվածք) և դրանց ուսումնա-սիրությունը շարունակում է ուսումնառության գրեթե ողջ ընթացքում: Հարցին վերաբերող մանկավարժական և գրականագիտական գրականության վերլուծությունը ցույց տվեց, որ ի տարբերություն ժողովրդական բանահյուսությանն առնչվող գրականագիտական մեծ թվով երկերի՝ սակավաթիվ են դրանց դասավանդման մեթոդիկայի վերաբերյալ հետազոտությունները, իսկ միջին դպրոցում բանահյուսական հենք ունեցող ստեղծագործությունների ուսուցման շարունակականության հարցը քննող աշխատանքներն ընդհանրապես բացակայում են: Հենց այս հանգամանքով էլ պայմանավորված է խնդրի ուսումնասիրման արդիականությունը:

Աշխատանքը նպատակ ունի բացահայտելու բանահյուսական հենք ունեցող ստեղծագործությունների ուսուցման շարունակականությունն ապահովող միջոցները, տեսականորեն և գործնականում հիմնավորելու մանկավարժական գործընթացում դրանց կիրառման նպատակահարմարությունը: Վերոնշյալ նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. քննել բանահյուսության բնորոշ գծերը,
2. ուսումնասիրել միջին և ավագ դպրոցներում <<Մայրենի>>, <<Գրականություն>>, <<Հայ գրականություն>> առարկաների ծրագրերում ընդգրկված և բանահյուսական հենք ունեցող ստեղծագործությունների ուսուցման շարունակական կապն ու առանձնահատկությունները,
3. ներկայացնել խնդրո առարկա նյութի ուսուցման շարունակականությունն ապահովող արդյունավետ եղանակներ:

Հետազոտության օբյեկտը հայ հին գրականությունն է, որն ուսումնասիրվում է դպրոցական կրթության տարբեր մակարդակներում, ավելի կոնկրետ՝ միջին և ավագ դասարաններում: Աշխատանքի առարկան միջին և ավագ դասարաններում հայ հին գրականության մաս կազմող բանահյուսական ստեղծագործությունների ուսուցման շարունակականության ապահովումն է:

Աշխատանքը կատարելիս օգտվել ենք հետևյալ մեթոդներից՝ վերլուծում,

համադրում, դիտում: **1** Բանահյուսության առարկան, առանձնահատկությունները,

կապը գրականության հետ

Բանահյուսության առարկան, առանձնահատկությունները: Բանահյուսությունը՝ ժողովրդի բանահյուսական ստեղծագործությունը, սկիզբ է առել անհիշելի ժամանակներից: Այն ընդգրկում է ժողովրդի աշխարհընկալումը, նրա իմաստությունն ու դարավոր կենսափորձը: Տարբեր ժողովուրդներ յուրովի են անվանում ժողովրդական բանահյուսությունը, բայց այդ հարցում բոլորն առաջնային պլան մղում են այն բնութագրումը, որ դա ժողովրդի կողմից ստեղծված արվեստ է: Օրինակ՝ գերմանացիները բանահյուսությանը տվել

են *Volkskunde,* գ*Volksdichtung* անունները, որոնցից առաջինը նշանակում է իմացություն, գիտություն ժողովրդի մասին, իսկ երկրորդը՝ ժողովրդական երգ, ժողովրդական ստեղծագործություն: Ֆրանսերեն այն անվանում են la tradition-popoulaire(ժողովրդական ավանդույթ), ռուսերեն՝ устная народная творчества(ժողովրդի բանավոր ստեղծագործություն): Ժողովրդական բանահյուսության էությունը պարզաբանում է անգլերեն folklore բառը, որը նշանակում է ժողովրդական իմաստություն: Ի մի բերելով այս ամենը՝ կարող ենք ասել, որ բանահյուսության առարկան այն ամենն է, ինչը ծագում է ժողովրդական ակունքներից: Ժողովրդական բանահյուսությունը ուսումնասիրող գիտությունը կոչվում է ֆոլկլորագիտություն: Այն ներառում է ժողովրդի բանաստեղծական բոլոր սեռերն ու ժանրերը:

Ժողովրդական բանահյուսությունը ունի մի շարք առանձնահատկություններ: Առաջինը նրա կոլեկտիվ բնույթ ունենալն է: Սրա իմաստը հետևյալն է՝ ժողովրդի ծոցից ելած մի անհատի կողմից ստեղծվելուց հետո այն հեռանում է այդ անհատից, անցնում բերանից բերան, սերնդից սերունդ, դառնում բոլորի սեփականությունը: Դրա լավագույն ապացույցը <<Սասնա ծռեր>> էպոսն է: Թե ով է առաջինը ստեղծել էպոսը, հիմա անհայտ է, սակայն հայտնի է, որ 19-20-րդ դարերում այն պատմել են 70-ից ավելի ասացողներ:

Բանահյուսության կարևոր առանձնահատկություններից մեկն էլ նրա բանավոր բնույթ ունենալն է: Այն ստեղծվել է անգրագետ մարդկանց կողմից և գրի չի առնվել: Այդ անգրագետ, բայց ի բնե օժտված տաղանդն իր ստեղծածը պահել է հիշողության մեջ, և այս ճանապարհով այդ փոխանցվել է սերնդից սերունդ: Ընդ որում, բանահյուսությունը գիտական տարբերակման և գրառման է ենթարկվել միայն սկսած 19-րդ դարից: Բանահյուսության բնորոշ գծերից մեկն էլ նրա բազմապատում լինելն է: Բանահյուսական բոլոր երկերը ունեցել են և ունեն իրենց տարբերակները: Օրինակ՝ <<Սասնա ծռեր>> էպոսից հայտնի են ավելի քան 60 պատումներ(հայտնի են մոտ 150 պատումներ, պարզապես համահավաք բնագիրը մշակվել է ավելի քան 60 պատումների հիման վրա): Վերջապես, բանահյուսության էական գծերից մեկն էլ նրա սիկրետիզմն է, այսինքն՝ միահյուսվածությունը: Դրա էությունը այն է, որ բանահյուսական ստեղծագործություններից յուրաքանչյուրի մեջ առկա են ինչպես քնարականը,

էպիկականն ու դրամատիկականը, այնպես էլ մարդու մշակած հոգևոր այլ տարրերը՝ երգը, պարը և այլն: Բանահավաքները բազմիցս նշել են, թե ինչպես էպոսի որոշ հատվածներ երգվում էին: Դրանցից շատերի կատարման ժամանակ երգողները միաժամանակ պարում էին: Ավելին, բանահյուսությունը կապված է ինչպես երաժշտական արվեստի, այնպես էլ խորեոգրաֆիայի հետ: Այսպիսով, ամփոփելով նշենք, որ բանահյուսության բնորոշ գծերն են՝ կոլեկտիվիզմը, բանավոր գոյություն ունեցող բազմապատմությունը և միահյուսվածությունը: Բանահյուսության ժանրային հարստությունը: Ըստ Մ. Աբեղյանի՝

բանահյուսական ստեղծագործությունները լինում են երեք տեսա-կի՝ 1. Վիպական բանահյուսություն, 2.Քնարական բանահյուսություն, 3. Դրամատիկական բանահյուսություն: Վիպական բանահյուսությունն ունի իր ենթատեսակները՝ 1. Վեպ(էպոս, էպոպեա), 2. Վիպական երգեր(առասպելական երգեր, հոգևոր, պատմական և բարոյակրթական երգեր): Վիպական բանահյուսության մեջ մտնում են նաև զանազան զրույցները՝ հեքիաթ, առակ, ավանդազրույց, ինչպես նաև՝ առածն ու հանելուկը:[1] Ինչ վերաբերում է հայ հին բանահյուսության ժանրային համակարգին, ապա բանագետ Գ. Գրիգորյանը իրավացիորեն նկատում է, որ չնայած կատարված բազմաթիվ հետազոտություններին՝ հայ հին բանահյուսության ժանրային հարստությունն ամբողջովին ուսումնասիրված չէ, իսկ Խորենացու օգտագործած բանահյուսական տերմիններին տրվել են հակասական իրարամերժ բացատրություններ: Որպես ասվածի ապացույց՝ բանագետը հիշեցնում է Մ. Էմինի այն տեսակետը, որի համաձայն հայերը հնում ընդամենը երկու ժանրի մի քանի գործ են ունեցել.<<Երկու էին տեսակք ազգային պատմական երգոց, յորոց ոմանք սոսկ երգ վիպասանաց, իսկ այլք՝ երգ թուելեաց կոչէին>>: [2]

Ըստ Գ.Գրիգորյանի՝ հեթանոսական Հայաստանում բանահյուսական ստեղծա-գործությունների տեսակները լիրիկական ժանրից գուսանական երգերը, պարերգերը(երգ պարուց), հարսանեկան երգերը և եղերերգերն էին, վիպականից՝ զրույցները, առասպելները, կենդանական վեպը, պատմական-վիպական երգերը և թվելյաց երգերը, իսկ դրամատիկականից՝ երգ ցցուցը:[3] Բանահյուսության և գրականության կապը ու փոխադարձ ներգործությունը: Մ. Գորկին գրում է. <<Բոլոր

ժամանակների նշանավոր գրողներն օգտվել են ժողովրդական բանահյուսությունից: Ժողովրդական բանահյուսության հիման վրա ստեղծվել են այնպիսի գլուխգործոցներ, ինչպիսիք են, օրինակ, <<Ֆաուստը>>, <<Բարոն Մյունխհաուզենի արկածները>>, <<Պանտագրյուելը և Գարգանտյուան>>, Դը Կոստերի <<Տիլ Ուլենշպիգելը>>, Շելլիի <<Ազատագրված Պրոմեթեոսը>> և շատ ուրիշներ>>:[4]

Բանահյուսությունը մեծ մտածողների համար ոչ միայն ունեցել է գեղարվեստական արժեք, այլև դարձել է տվյալ ժողովրդի պատմությունն ուսումնասիրելու միջոց: Շատ հին ժամանակներում բանահյուսությունը ժողովրդի համար եղել է հոգևոր սնունդ: Հեթանոսական Հայաստանի մեհենական մատյաններն իրենց մեջ ամփոփել են ժողովրդական բանահյուսական գոհարները: Դրանց մեջ դիցաբանական ոգով խոսվել է երկրի քաղաքական և կրոնական հարցերի մասին: Իսկ մաշտոցյան գրերի գյուտից հետո բանահյուսությունը սկսել է ներթափանցել նաև

[1] Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, Հ.Ա, 1966, էջ 8-9:
[2] Գ.Գրիգորյան, Հայ ժողովրդական վիպերգերը և պատմական երգային բանահյուսությունը, Երևան, 1972, էջ 9-10: [3] Տե՛ս Գ.Գրիգորյան, Հայ ժողովրդական վիպերգերը և պատմական երգային բանահյուսությունը, Երևան, 1972, էջ 14-63: [4] Մ. Գորկի, Գրական հրապարակախոսական հոդվածներ, 1949, էջ 292

հայ գրավոր դպրոց: Խորենացին և Բյուզանդը իրենց պատմությունները շարադրելիս լայն չափերով օգտվել են բանահյուսական նյութերից: Միջնադարյան առակագրությունը ևս հարազատ է մնացել ժողովրդական բանահյուսությանը: Պոեզիան՝ սկսած Նարեկացուց մինչև Սայաթ-Նովա, խորապես կրում է բանահյուսության ազդեցությունը: Նոր գրականության վրա նույնպես զգացվում է բանահյուսության զորավոր ներգործությունը: Նրա ներկայացուցիչները ոչ միայն գրական պրակտիկայում օգտվում էին բանահյուսությունից, այլև տեսականորեն պնդում ու հաստատում էին այն միտքը, թե գրականությունը պետք է հենվի ժողովրդական բանահյուսության վրա:

Բանահյուսության և գրականության կապն ու փոխադարձ ներգործությունը վկայում են նրանց հարազատության, նրանց սոցիալ-քաղաքական, դաստիարակչական ու վերափոխիչ հզոր ֆունկցիայի մասին: Նրանք երկուսն էլ գեղարվեստական մեծ ընդհանրացումներով արտացոլում են ժողովրդի կյանքն ու պայքարը, նրա ձգտումներն ու սպասելիքները, հոգեբանությունն ու պատմական զարգացման ընթացքով

ձևավորված ազգային հատկանիշները: Բանահյուսությունը և գրականությունը եղել և մնում են սերտ միասնության մեջ:

2 Միջին և ավագ դպրոցներում <<Մայրենի>>, <<Գրականություն>>, <<Հայ գրականություն>> առարկաների ծրագրերում ընդգրկված և բանահյուսական հենք ունեցող ստեղծագործությունների ուսուցման շարունակական կապն ու առանձնահատկությունները

Միջին դպրոցում աշակերտները շարունակում են ուսումնական գործընթացը՝ հենվելով տարրական դպրոցում ստացած գիտելիքների վրա: Արդեն նրանց հայտնի են, թե ինչ են հեքիաթը, հանելուկը, առակը, առած ասացվածքները, էպոսը: 5-րդ դասարանում մի ամբողջ թեմա՝ <<Երկնքից երեք խնձոր ընկավ>>, տրամադրվում է հեքիաթի ուսուցմանը: Այս ընթացքում ուսումնասիրվում են ոչ միայն հայկական (ժողովրդական և հեղինակային), այլև օտար հեքիաթագիրների ստեղծագործություններ:

Հեքիաթը՝ որպես բանահյուսական ստեղծագործություն, ունի յուրահատուկ կառուցվածք: Սկսվում է հիմնականում հետևյալ արտահայտություններով՝ <<Լինում է, չի լինում>>, <<Ժուկով-ժամանակով>>, <<Կար չկար>> և այլն: Տարբերվող է նաև ավարտը՝ <<Չարն՝ այնտեղ, բարին՝ այստեղ>>: Հեքիաթները լինում են երեք տեսակ՝ հրաշապատում, իրապատում և

կենդանական: Հայ ժողովրդական հեքիաթների առաջին օրինակները հրատարակել է Գ. Սրվանձտյանը <<Մանանա>>, ապա՝ <<Համով-հոտով>> ժողովածուներում: Հետագայում տարբեր հեղինակներ մշակել են ժողովրդական հեքիաթները: Հեքիաթներն ուսումնասիրելիս կարևոր է միջառարկայական կապերի ստեղծումը: Աշակերտները ծանոթանում են ազգային մշակույթին և

արվեստին(ազգային մշակույթ և արվեստ), պատկերացնում են պատմվող դեպքերի հավանական տարածքը(աշխարհագրություն), հավանական ժամանակաշրջանը(պատմություն), տեղեկություններ են ստանում հանդիպող կենդանիների և բույսերի մասին(բնագիտություն):

Բանահյուսական կարևոր ստեղծագործություններ են առակները: Դրանք շատ նման են կենդանական հեքիաթներին: Առակները լինում են արձակ և չափածո: Այն

այլաբանական, բարոյախրատական ստեղծագործություն է: Ժողովուրդն առակի միջոցով դատապարտում է հակամարդկայինը: Միջին դպրոցում առակների ուսումնասիրությունը սկսվում է 5-րդ դասարանից՝ <<Առակս ի՞նչ կցուցանե>> թեմայով: Առակի ուսուցման նպատակներն են՝ ըմբռնել առակի ժանրի բնորոշ առանձնահատկությունները, վերլուծել առակը, բացահայտել առակի խրատական դերը: Ինչպես բոլոր թեմաներում, առակն ուսումնասիրելիս նույնպես կարևոր են միջառարկայական կապերը: Ստեղծվում են կապեր աշխարհագրության, օտար լեզուների, պատմության, բնագիտության, արվեստի, մշակույթի և այլ առարկաների հետ: Առակի ուսուցումը շարունակվում է 9-րդ դասարանում, այնուհետև ավագ դպրոցում՝ 10-րդ դասարանում: 9-րդ և 10-րդ դասարաններում ուսումնասիրվում են Վ. Այգեկցու և Մ. Գոշի առակները, որոնց մի մասը նույնպես ունի բանահյուսական հիմք: Այդ դասարաններում սովորողներն ամփոփում, ի մի են բերում միջին դասարաններում ստացած գիտելիքները, դրանք կապում են կյանքի հետ, բերում սեփական նմանատիպ օրինակներ:

Հեքիաթի և առակի ուսուցմանը զուգահեռ ուսումնասիրվում են նաև բանահյուսական մյուս ստեղծագործությունները՝ առած-ասացվածքները, հանելուկները: Առած-ասացվածքները ժողովրդական իմաստուն խոսքեր են, որոնք աչքի են ընկնում դաստիարակչական նշանակությամբ: Առածն ունի փոխաբերական նշանակություն, իսկ ասացվածքը ուղղակի միտք է, գրեթե փոխաբերական իմաստ չունի:[5] Ինչ վերաբերում է հանելուկներին, ապա սրանք ստեղծվել են միտքը մարզելու նպատակով, դրանք արտահայտում են որևէ երևույթ փոխաբերական միջոցով: Հանելուկներ կազմում էին հատկապես բնության երևույթների և գազանների մասին, որոնցից վախենում էին: Հանելուկը գրեթե միշտ սկսվում է հարցով՝ <<Այն ի՞նչն է, ի՞նչը>>: 9-րդ դասարանում անդրադարձ է կատարվում հանելուկներին, որոնք գրել է Ն. Շնորհալին: Այն, ինչ ավելի փոքր տարիքում զվարճալի է թվում, այժմ արդեն մտածելու տեղիք է տալիս: Աշակերտները փորձում են հորինել հանելուկներ:

Բանահյուսական կարևոր մյուս ստեղծագործությունների՝ առասպելի և էպոսի ուսուցումը նույնպես սկսվում է միջին դասարաններից և շարունակվում ավագ դպրոցում: 5-6-րդ դասարաններում աշակերտները ծանոթանում են <<Վահագնի

[5] Ա. Դոլուխանյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 2008, էջ 35

ծնունդը>>, <<Հայկ և Բել>>, <<Արտաշես և Սաթենիկ>>, ինչպես նաև հին հունական <<Ադոնիս>> ավանդազրույցներին: Իսկ 9-րդ դասարանում ուսումնասիրում են հայ ժողովրդական էպոսը: Առասպելների և ավանդազրույցների միջոցով սովորողները ծանոթանում են հին հայկական մշակույթին, սովորություններին, պատկերացում են կազմում պատմական որոշակի ժամանակաշրջանի վարքուբարքի, կենցաղի մասին: Իսկ էպոսի ուսումնասիրությունը աշակերտների մեջ արթնացնում է հայրենասիրություն, ժողովրդասիրություն, թշնամու դեմ պայքարելու ձգտում և այլն: Առասպելների և էպոսների ուսումնասիրությունը ունի հետևյալ նպատակները՝ հասկանալ և գնահատել առասպելի, էպոսի պատմական հիմքը, տարբերել իրականի և երևակայականի սահմանները, ներկայացնել չափազանցությունները, համեմատել հայ և օտար առասպելներն և էպոսները, ուշադրություն դարձնել թևավոր խոսքերին, բացատրել դրանց նշանակությունը, ուշադրություն դարձնել խոսակցական բառապաշարին, բարբառային արտահայտություններին:

Առասպելների ուսուցման ժամանակ միջառարկայական կապեր են ստեղծվում մշակույթի, արվեստի, օտար լեզուների, պատմության, աշխարհագրության, բնագիտության հետ: Առասպելների և էպոսի ուսումնասիրությունը շարունակվում է 10-րդ դասարանում: <<Մ. Խորենացի>> թեմայի շրջանակներում ներկայացվում են հին հայկական առասպելները: Ավագ դպրոցի աշակերտն արդեն պետք է կարողանա վերլուծել առասպելների գաղափարը, գնահատել հերոսների արարքները, պատկերացնել ժամանակաշրջանը, կապ ստեղծել ներկայի հետ: Այդ շրջանում արդեն կարևորվում են աշակերտների ինքնուրույն ուսումնասիրությունը և աշխատանքը: 10-րդ դասարանում <<Սասնա ծռեր>> էպոսն ուսումնասիրվում է ամբողջությամբ՝ ըստ համահավաք բնագրի: Սովորողը պետք է ինքնուրույն ընթերցի, վերլուծի էպոսը, կատարի հրահանգումներ, կապի կյանքի հետ: Սովորողները պետք է կարողանան համեմատել էպոսի համահավաք բնագիրը և մշակված տարբերակները: Այսպիսով՝ բանահյուսական հենք ունեցող ստեղծագործությունների ուսումնասի-րությունը շատ կարևոր է աշակերտի ազգային ինքնագիտակցության, ազգապահպա-նության, ինքնաճանաչողության,

հայրենասիրության ձևավորման հարցում:

3 Բանահյուսական հենք ունեցող ստեղծագործությունների ուսուցման արդյունավետ եղանակները

Ինչպես բոլոր ստեղծագործությունների, այնպես էլ բանահյուսական հենք ունեցող գործերի ուսուցման համար կարևոր է արդյունավետ հնարների ընտրությունը: Վերջին շրջանում հաճախ են հակադրում ուսուցման նոր և ավանդական մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Կարծում ենք, որ դրանք ոչ թե պետք է հակադրել, այլ ճիշտ համադրել՝ արդյունավետ ուսուցում կազմակերպելու նպատակով: Միջին դասարաններում

ուսումնասիրվում են բանահյուսական հենք ունեցող տարբեր ստեղծագործություններ՝ հեքիաթներ, առակներ, ավանդազրույցներ, առասպելներ, էպոս: Հեքիաթների ուսումնասիրման ժամանակ դրվում են նպատակներ՝ ցույց տալ իրականի և երևակայականի սահմանները, բարու և չարի պայքարը, ուսումնասիրել ազգային կենցաղի, իրերի, մարդկային հարաբերությունների, վարքուբարքի նկարագրությունները, բնութագրել հեքիաթի հերոսներին, ուսումնասիրել հեքիաթի լեզվաոճական առանձնահատկություն-ները, համեմատել հեքիաթը և դրա հիման վրա նկարահանված մուլտֆիլմը և այլն: Գրական յուրաքանչյուր ստեղծագործության ուսումնասիրությունը կարևոր է սեփական անձի ինքնաճանաչողության, աշխարհաճանաչողության, մարդկային հարաբերությունները վերլուծելու և արժևորելու, մտերիմ և շրջապատի մարդկանց նկատմամբ հոգատար և կարեկից վերաբերմունք դրսևորելու, ինչպես նաև գեղեցիկին ու կյանքի բանաստեղծությանը հաղորդակից լինելու հարցում: Այս տեսանկյունից առանձնահատուկ տեղ ունեն բանահյուսական ստեղծագործությունները. չէ՞ որ

դրանք ժողովրդի դարավոր լեզվամտածողության, տաղանդի ու հարուստ կենսափորձի

արդյունքն են:

Միջին

դասարաններում աշակերտները բանահյուսությանը ծանոթանում են հեքիաթների միջոցով: Վաղ մանկությունից ծանոթ և նոր լսած հեքիաթները սովորողները պետք է կարողանան դասակարգել՝ ըստ տեսակների, վերլուծել բովանդակությունը, համեմատել հերոսներին, քննել նրանց արարքները, արտահայտել սեփական կարծիք հերոսների և

նրանց արարքների վերաբերյալ: Դրանք ձևավորում են տարբեր կարողունակություններ, նպաստում ցանկալի վերջնարդյունքների ձեռքբերմանը: Հեքիաթն ուսուցանելիս օգտագործում ենք տարբեր հնարներ և մեթոդներ՝ 5 րոպեանոց շարադրանք, մտագրոհ, մուտքի զրույց, քառաբաժան, կանխագուշակման աղյուսակ, Վենի դիագրամ, **T**-աձև աղյուսակ, ուղղորդված ընթերցանություն, դերային խաղեր և այլն:

Հեքիաթի ուսուցումն արդյունավետ է սկսել մտագրոհով կամ մոտիվացնող հարցուպատասխանով: Կարծում ենք՝ սկզբնական շրջանում օգտակար կլինի ուղղորդված ընթերցանությունը, որի ընթաց քում աշակերտները կհարստացնեն լեզվական գիտելիքնե-րը, կսովորեն անծանոթ բառերի բացատրությունը, կփորձեն պատմել փոքրիկ հատվածներ: Հեքիաթի վերլուծության ընթացքում սովորողները կկարողանան բնութագրել հերոսներին՝ ըստ նրանց արարքների, հիմնավորել նրանց արարքները՝ հիմնվելով առկա փաստերի վրա: Հեքիաթի հանգամանալից ուսումնասիրությունը նախադրյալներ է ստեղծում, որ աշակերտը հետագայում կարողանա վերլուծել ցանկացած այլ ստեղծագործություն: Առակի ուսումնասիրությունը նույնպես կարևոր դեր ունի: Այն զարգացնում է քննադատական մտածողություն, այլաբանությունների բացահայտման կարողություն: Առակի ուսուցումը արդյունավետ կլինի տարբեր հնարների և մեթոդների կիրառման դեպքում՝ մտագրոհ, մուտքի զրույց, նկարագրություն, քննարկում, վիճարկում, հույզերի առաջացում, կանխագուշակման աղյուսակ, ուշադիր ընթերցանություն, բանալի բառեր, եզրահանգում և այլն:

Հեքիաթի և առակի ուսուցմանը զուգահեռ աշակերտները ծանոթանում են բանահյուսության մեկ այլ ստեղծագործության՝ առած-ասացվածքներին: Սրանց հետ կապվում են տարբեր թևավոր խոսքեր, որոնք նույնպես զարգացնում են սովորողների լեզվամտածողությունն ու աշխարհաճանաչողությունը: Բանահյուսական բոլոր ստեղծագործությունների ուսուցումը նպատակ ունի նպաստելու բարի, ազնիվ, հանդուրժող, արդար քաղաքացու ձևավորմանը:

Բանահյուսական հենք ունեցող փոքրածավալ ստեղծագործությունները՝ հանե-լուկները, նույնպես կարևոր են, որովհետև մարզում են սովորողների միտքը, զարգացնում արագ մտածելու, առակները համադրելու կարողություններ: Ավանդազրույցներն ու առասպելները ժողովրդական բանահյուսության այն նմուշներից

են, որոնք ընդգրկված են միջին և ավագ դասարանների ծրագրերում: Դրանց ուսուցման ժամանակ կարելի է համեմատել հեքիաթներն ու առասպելները, ներկայացնել նմանություններն ու տարբերությունները: Որոշ առասպելների հիմքով գրվել են գեղարվեստական ինքնուրույն ստեղծագործություններ: Օրինակ՝ <<Վահագնի ծնունդը>> առասպելին անդրադառնում ենք նաև Դ. Վարուժանի <<Ձոն>> բանաստեղծության ուսուցման ժամանակ, ավելի ուշ՝ Ե. Չարենցի <<Վահագն>> բանաստեղծության ուսուցման ժամանակ: Իսկ <<Արա Գեղեցիկ և Ծամիրամ>> առասպելին անդրադարձ է կատարվում Ն. Զարյանի <<Արա Գեղեցիկ>> դիցապատմական ողբերգությունն ուսումնասիրելիս: Վեննի դիագրամի միջոցով կարող ենք ներկայացնել առասպելի և դրամայի նմանություններն ու տարբերությունները:

Բանահյուսական ամենածավալուն ստեղծագործությունը՝ էպոսը, առանձին հատվածներով ուսումնասիրվում է 9-րդ դասարանում, ամբողջական՝ 10-րդ դասարանում: Էպոսի ուսուցման արդյունավետ հնարներից կարող է լինել ուշադիր ընթերցանությունը: Աշակերտները տրված ժամանակում կընթերցեն հատվածը, ապա վերընթերցելով կպատասխանեն նախօրոք պատրաստված հարցերին: Վերլուծության ընթացքում կհամեմատեն հերոսներին, կվերարտադրեն հատվածների բովանդակությունը, կգնահատեն հերոսների քաջությունը, ազատ և անկախ ապրելու ձգտումը: Հայ ժողովրդական էպոսը կարող ենք համեմատել այլ ժողովուրդների էպոսների հետ, գտնել նմանություններ և տարբերություններ: 10-րդ դասարանում աշակերտներն ինքնուրույն ընթերցում են համահավաք բնագիրը, ապա կատարում էպոսի ամբողջական վերլուծություն:

Բանահյուսական ստեղծագործությունները լրացնում են իրար, ինչ-որ տեղ միահյուսվում: Նրանց միջոցով ձևավորված արժեքները՝ հայրենասիրությունը, հայրենաճանաչությունը, ազգային ինքնության և մշակույթի ճանաչումը, գնահատումը և արժևորումը, ուղեկցում են սովորողին նաև հետագա կյանքում:

Եզրակացություններ

Այս աշխատանքը կատարելիս եկանք հետևյալ եզրակացություններին.

• Բանահյուսական ստեղծագործությունները գրականության անբաժանելի մասն են: • Գրական շատ ստեղծագործություններ ունեն բանահյուսական հենք: • Ուսումնական ծրագրերում ապահովված է բանահյուսական հենք ունեցող ստեղծագործությունների

ուսուցման շարունակականությունը, այսինքն՝ նույն թեմային անդրադառնում ենք տարբեր դասարաններում:

• Բանահյուսական ստեղծագործությունները նպաստում են ազգային արժեքների պահպանմանը, աշակերտների բազմակողմանի դաստիարակության իրականաց-մանը:

• Բանահյուսական հենք ունեցող ստեղծագործությունների ուսումնասիրությունը շատ կարևոր է աշակերտի ազգային ինքնագիտակցության, ազգապահպանության, ինքնաճանաչողության, հայրենասիրության ձևավորման հարցում:

• Բանահյուսական հենք ունեցող ստեղծագործությունների ուսուցման համար արդյունավետ են այն բոլոր եղանակներն ու մեթոդները, որոնք զարգացնում են սովորողի քննադատական մտածողությունը, ձևավորում են բարոյական բարձր արժեքներ:

1. Աբեղյան Մ., Երկեր,Հատոր Ա, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1966, 567 էջ: 2. Գորկի Մ., Գրական հրապարակախոսական հոդվածներ, Երևան, Հայպետհրատ, 1949, 478 էջ: 3. Գրիգորյան Գ., Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, <<Լույս>> հրատ., 1967, 496 էջ:

4. Գրիգորյան Գ., Հայ ժողովրդական բանահյուսություն, Քրեստոմատիա, Երևան, Երևանի համալս.հրատ., 1974, 534 էջ:

5. Գրիգորյան Գ., Հայ ժողովրդական վիպերգերը և պատմական երգային բանահյուսությունը, Գիրք Ա, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1972, 398 էջ:

6. Դոլուխանյան Ա., Հայ գրականության պատմություն, Հին և միջնադարյան գրականություն, <<Զանգակ 97>> հրատ., Երևան, 2006, 129 էջ:

7. Դոլուխանյան Ա., Հայ ժողովրդական բանահյուսություն, <<Զանգակ-97>> հրատ., Երևան, 2008, 268 էջ: